

07.02.2014 11:47



Հարգելի գործընկերներ

ՀՀ Փաստաբանների պալատի ակումբը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ 2014 թվականի փետրվարի 05-ին կազմակերպել էր քննարկում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ

1. Հայցվորի կողմից հայցից հրաժարվելու դեպքում պետական տուրքի բռնագանձման մասին:
2. Վարչական իրավախախտումների դեպքում՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին:

Քննարկումը կազմակերպվել է փաստաբաններ Անահիտ Բեգլարյանի և Կարինե Բաղդասարյանի կողմից:

Ակումբի մասնակիցները արձանագրեցին, որ նախ անհրաժեշտ է պարզել հայցից հրաժարումը արդյոք պատասխանողի կողմից պարտավորությունների կատարման հետևանք է թե՛ ոչ: Բացի այդ, քանի որ պետական տուրքը մոլծկում է պետության կատարած ծառայության դիմաց, իսկ հայցից հրաժարվելու դեպքում ծառայությունը ամբողջությամբ չի մատուցվել, ուստի այս դեպքում չի կարող պետական տուրքի գումարը գանձվել ամբողջությամբ, այլ պետք է գանձվի կատարած փաստացի ծառայության դիմաց:

Ակումբի մասնակիցները գտան, որ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություն, այն է՝ անհրաժեշտ է գործի նախապատրաստական փուլում վեճերի լուծման դեպքում պետական տուրքի չափը նվազեցնել և պետական տուրքի գումար գանձել կատարած փաստացի ծառայության դիմաց: Այդ փոփոխությամբ պետական տուրքի գանձման չափը համարժեք կլինի կատարված ծառայությանը, ինչպես նաև կնպաստի վեճերի արագ լուծմանը և կրեոնաթափի դատարանների աշխատանքը:

Փաստաբան Կարինե Բաղդասարյանը առաջարկել է անվճար իրավաբանական խորհրդատվություն տալ այնպիսի գործերով, երբ վարչական պատասխանատվության են ենթարկվում սկսած 5000 ՀՀ դրամից - 100 000 ՀՀ դրամը ներառյալ:

ԽՆԴԻՐՆ ԱՅՆ Է, ՈՐ ԱՆԾՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԵՏՔ Է ՄԻ ԶԱՆԻ ԱՆԳԱՄ ԱՎԵԼ ՎՃԱՐԻ, ԶԱՆ ՏՈՒԳԱՆՔՆ Է, ՈՒՍՏԻ ԱՆԾՂ չի դիմում իրավական պաշտպանության, այլ ուղղակի վճարում է տուգանքի գումարը:

Ակումբի մասնակիցները արձանագրեցին, որ այդ ոլորտում թույլ տրված իրավունքի խախտումները ուսումնասիրելով կարելի է լուրջ խախտումներ հայտնաբերել և այդ կերպ օգնել անձանց, բացի այդ

կոլեկտիվ հայցերի ներդնման ինստիտուտը
հնարավորություն կտա անձանց միավորվելու և
իրավական արդյունավետ պաշտպանություն
իրականացնելու :
Առաջարկվել է ուսումնասիրել այդ ոլորտում թույլ
տրված իրավունքի խախտումները:
Անհրաժեշտության դեպքում կազմել
հայցադիմումների տիպային օրինակներ՝ մի քանի
վարչական իրավա-խախտումների վերաբերյալ:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```